ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Խ. Շաքարյանի (պետական գրանցման համար՝ 282.110.05533)

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ՝

Տ. Աբրահամյանի (լիազորագիր տրված՝ 23.05.2019թ.)

Քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի կողմից 25.07.2019թ. ներկայացված և 25.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանը (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 25.07.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար հայտարարել է բժշկական կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 21.06.2019թ.: Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն: 24.07.2019թ. ժամը 16:16:50-ին gnumner.am պաշտոնական կայքում տեղադրվում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարություն, սակայն մինչ այժմ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրություն չի հրապարակվել, այլ միանգամից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որը օրենքից դուրս է:

Բողոքաբերը հայտնել է, որ Պատվիրատուն սույն ընթացակարգի իմաստով որպես մասնագիտական փորձառության չափորոշիչ սահմանել է. «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը:

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմանվորող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընդ որում որպես մասնագիտական փորձառության չափորոշիչ նախկինում կատարված նախկինում կատարված պայմանագրեր չի ներկայացրել կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրեր, այլ ներկայացրել է բժշկական պարագաների և այլ բժշակական պարագաների մատակարարման պայմանագրեր, որոնք չեն հանդիսանում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգեր:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի 23.07.2019թ. թիվ 1.3-րդ որոշմամբ ապօրինի կերպով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն որակավորման հատկանիշները և փաստաթղթերը

գնահատվել են համապատասխան ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինս հայտարարվել է ընտրված /հաղթող/ մասնակից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

Բողոքաբերը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ իր կողմից ներկայացված պայմանագրերը չեն համարվում նմանատիպ Ընթացակարգի հրավերի շրջանակներում:

Բողոքաբերը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքաբերը բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և չեղյալ համարել հանձնաժողովի նիստի «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու, գնահատող հանձնաժողովի 2019թ. հուլիսի 23-ի թիվ 1.3-րդ որոշմամբ վերջինիս հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի Բողոքաբերը հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը:

Նույն հրավերի համաձայն՝ նշված Ընթացակարգով նախատեսվել է ձեռքբերել հետևյալ CPV կոդերով ապրանքներ.

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ
1	Ֆիզիկոքիմիական հետազոտության լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/7
2	Մանրէաբանական լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/8
3	Նմուշապատրաստման սենյակի օդաքարշ համակարգ	39717200/2

Սույն Ընթացակարգով գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգով հաղթող մասնակից է ճանաչվել միակ մասնակից՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն:

Բողոքաբերը գտնում է, որ սույն Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք պահանջների խախտումներ, մասնավորապես.

ա) Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Բողոքաբերը մեկ անգամ ևս պնդել է, որ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի հրապարակվել հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունները:

Բողոքաբերը հայտնել է, որ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքը ներկայացնելուց հետո և բողոքի վերաբերյալ համապատասխան հայտարարությունը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակելուց հետո (25.07.2019թ.) հաջորդ օրը նոր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում՝ հայտերը բացելուց հետո գրեթե մեկ ամիս անց, հրապարակվել է թիվ 3 արձանագրությունը, ընդ որում մեկ արձանագրության մեջ միավորվել էին երկու ընթացակարգային տարբեր նիստեր՝ հայտերի բացում և հայտերի գնահատում:

Բողոքաբերը հայտնել է, որ նշվածի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը:

Նույն հրավերի գնման ժամանակացույցի համաձայն՝ նշված Ընթացակարգով նախատեսվել է ձեռքբերել հետևյալ CPV կոդերով ապրանքներ.

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ
1	Ֆիզիկոքիմիական հետազոտության լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/7
2	Մանրէաբանական լաբորատորիայի կահույքի հավաքածու	33191120/8
3	Նմուշապատրաստման սենյակի օդաքարշ համակարգ	39717200/2

Բողոքաբերը հայտնել է, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել են թվով 2 պայմանագրեր՝

31.07.2017թ. «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի գնման ապրանքն է հանդիսացել «Օդափոխության համակարգը», իսկ CPV կոդն է 42520000:

22.01.2018թ. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բշժկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16/1-1» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի գնման ապրանքն է հանդիսացել «Քիմիական և քարշիչ պահարան», իսկ CPV կոդն է 39151240:

Վերը նշված պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքները պատկանում են տնտեսական գործունեության միանգամայն այլ խմբի, քան պահանջվել է Ընթացակարգի հրավերով:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որպեսզի նմանատիպ պայմանագիրը լինի լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագիր՝ հետևյալ CPV կոդով՝ 33191120/7, 33191120/8, 33191120/2:

Մինչդեռ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես համանման ներկայացրած պայմանագրերով մատակարարվել են միանգամայն այլ ապրանքներ՝ «Օդափոխության համակարգեր» և «Քիմիական և քարշիչ պահարան» ապրանքները, իսկ մատակարարված ապրանքների CPV կոդերը նույնպես միանգամայն այլ են՝ 42520000 և 39151240:

Բողոքաբերը գտնում է, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը չեն կարող համարվել համանման, քանզի դրանք չեն համապատասխան Ընթացակարգի հրավերի պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ կառավարության 13.04.2017թ. «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 390-Ն որոշման 4-րդ հավելվածով սահմանվել է գնումների միասնական անվանացանկը: Վերոհիշյալ հավելվածով նախատեսվել են նաև գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համապատասխան բաժինը, խումբը և դասը, որում պետք է ներառվի ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը:

ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման 4-րդ հավելվածի համաձայն՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը առաձնացված են հետևյալ խմբերում.

42520000	Օդափոխման սարքեր
39151240	Կահույքի մասեր

Մինչդեռ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով ձեռքբերվող ծառայության CPV կոդը վկայում է, որ այդ ծառայությունը մտնում է ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման 4-րդ հավելվածով նախատեսված միանգամայն այլ բաժնի համապատասխան խմբի մեջ, մասնավորապես՝

33191120	բժշկական կահույք

Համապատասխանաբար, Հրավերով ձեռքբերման ենթակա ապրանքը մտնում է հետևյալ միանգամայն այլ բաժնի մեջ՝ 33000000 /Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ/, իսկ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերը վերաբերում են այլ տնտեսական բաժիններին՝ հապատասխանաբար՝ 42000000 /Արդյունաբերական սարքավորումներ/ և 39000000 /Կահույք (ներառյալ գրասենյակային կահույքը), կահավորանք, կենցաղային տեխնիկա (բացառությամբ լուսավորության) և մաքրման համար նախատեսված արտադրանք:

Բողոքաբերը նշել է, որ բերված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Ընթացակարգի հրավերով պահանջված և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես համանման ներկայացված ապրանքները մտնում են տնտեսական գործունեության տարբեր խմբերի մեջ:

Իսկ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Բողոքաբերը գտնում է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 65-րդ կետի պահանջներով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր անբավարար գնահատել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ մասնագիտական փորձառության մասով, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել:

Բողոքաբերը խնդրել է Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքը քննելիս՝ հաշվի առնել նաև ներկայացված լրացուցիչ փաստարկները և բավարարել բողոքով ներկայացրած պահանջները:

Բողոքաբերը խնդրել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, հաշվի առնելով, որ սույն բողոքով որպես բողոքի քննության վերջնաժամկետ սահմանվել է 23.08.2019թ., ուստի դիրքորոշման հետ կապված լրացուցիչ հարցեր լինելու դեպքում հնարավորություն ընձեռնել Բողոքաբերին համապատասխան նիստի ժամանակ ներկայացնելու նաև սույն դիրքորոշման համար հիմք հանդիսացած փաստերը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.08.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Իմմոնոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Իմմոնոֆարմ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Իմմոնոֆարմ» ՍՊԸ-ի տնօրենը, ապահովելով իր մասնակցությունը բողոքի քննության նպատակով 01.08.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստին, հայտնել է, որ համակարծիք է Պատվիրատուի լիազորված ներկայացուցչի կողմից հնչեցված դիրքորոշման հետ:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 27.07.2019թ. գրության, ներկայացրել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և գրությամբ հայտնել է հետևյալը.

12.06.2019թ. ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարվել է բժշկական կահույքի ձեռք բերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով ընթացակարգ և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 21.06.2019թ., ժամը 12:00-ն: Ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: 01.07.2019թ. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: 04.07.2019թ. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Բողոքաբերի պնդումն, առ այն, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափորոշիչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, առնվազն զարմանք է առաջացնում, քանի որ պարզ չէ թե ինչ փաստերի վրա է հիմնված նրա այդ պնդումը: Ոչ բողոքաբերի և ոչ էլ այլոց կողմից «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթեր տրամադրելու պահանջ չի ներկայացվել, հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ոչ ոքին չի տրամադրվել: Ավելին, «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափորոշիչը հիմնավորող նմանատիպ պայմանագրեր ներկայացրել է քիմիական քարշիչ պահարանի և օդափոխման համակարգի մատակարարման վերաբերյալ պայմանագրեր, այլ ոչ թե՝ բժշկական պարագաների պայմանագրեր:

Ինչ վերաբերվում է տեղեկագրում բացման նիստի արձանագրությունը տեղադրված չլինելու հանգամանքին, ապա հայտնում եմ, որ ինտերնետ կապի խափանման պատճառով այն հնարավոր չի եղել հրապարակել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դա շտկվել է և արձանագրությունը հրապարակվել է: Միաժամանակ, հավաստիացնում եմ, որ բացման նիստի արձանագրությունը սահմանված ժամկետում չհրապարակելը չի հանգեցրել սույն ընթացակարգի մասնակցի շահերի ոտնահարմանը, քանի որ armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Միաժամանակ, անհասկանալի է, թե Արմեն Հովհաննիսյանը չհանդիսանալով սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից, ինչ նպատակ է հետապնդում բողոք ներկայացնելով, նրա, որ իրավունքն է խախտվել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի, գնումները համակարգողի գործողություններով և որն է նրա շահը:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքաբերի պահանջն անհիմն է, քանի որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի պահանջներին և բողոքաբերի պահանջի բավարարման դեպքում ընտրված մասնակցի փոփոխություն տեղի չի ունենա:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.08.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Պատվիրատուի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև 22.01.2018թ. կնքված քիմիական քարշիչ պահարանի մատակարարման N ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16/1-1 պայմանագիրը, ինչպես նաև «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.07.2017թ. կնքված օդափոխության համակարգի մատակարարման N ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/6 պայմանագիրը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ Ընկերության որակավորման չափանիշները գնահատվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող և վերջինս հայտարարվել է ընտրված/հաղթող մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի 25.07.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում*** իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և ***հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը*** (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ

պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար***, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության

նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: ***Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:***

Պատվիրատուի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

<u>Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը:</u>

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. ***մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության որակավորման հատկանիշները գնահատվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող և վերջինս հայտարարվել է ընտրված/հաղթող մասնակից:

Այսպիսով, Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար Ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում <u>լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի</u> մատակարարման պայմանագրերը***:

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև 22.01.2018թ. կնքված

<u>քիմիական քարշիչ պահարանի</u> մատակարարման N ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16/1-1 պայմանագիրը, ինչպես նաև «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.07.2017թ. կնքված ***<u>օդափոխության համակարգի</u>*** մատակարարման N ՀԱԲԼԾԿ ԳՀԱՊՁԲ-17/6 պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: ***<u>Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:</u>***

Ուսումնասիրելով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը, գտնում եմ, որ վերջիններիս շրջանակներում Ընկերության կողմից մատակարարված ապրանքները ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50 ծածկագրով ընթացակարգի հրավերի իմաստով ըստ էության իրենց տեսակով հանդիսանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 1-ին պարբերության «ա» կետի համաձայն նմանատիպ, մասնավորապես՝ հրավերի նշված կետով նմանատիպ է դիտարկվել լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարման պայմանագրերը, իսկ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են քիմիական քարշիչ պահարանի և օդափոխության համակարգի մատակարարված լինելը հավաստող պայմանագրեր: Այսինքն, Ընկերության կողմից ներկայացվել է այն, որը և փաստացի որպես նմանատիպ պահանջվել է հրավերով:

Այսպիսով՝ միաժամանակ հաշվի առնելով Կարգի 65-րդ կետը, այն որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը

մեկնաբանվում է հօգուտ մասնակցի, ապա գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով Ընկերության «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 61-րդ կետով, Կարգի 65-րդ կետով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանված պահանջների պահպանմամբ, հետևաբար գտնում եմ, որ Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ Պատվիրատուի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունները հրապարակվել են միայն ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոքի վերաբերյալ համապատասխան հայտարարությունը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրը, որի արդյունքում Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները, ապա այս առումով հարկ եմ համարում նշել, որ Բողոքաբերի կողմից նված փաստարկը չի կարող «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք հանդիսանալ, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը հստակ սահմանում է հայտի մերժման հիմքերը, մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի սահմանում է, որ հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, այն պայմաններում երբ չեն համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ բերված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Ընթացակարգի հրավերով պահանջված և «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից որպես համանման ներկայացված ապրանքները մտնում են տնտեսական գործունեության տարբեր խմբերի մեջ, ապա հարկ եմ համարում նշել, որ ի սկզբանե Ընկերության կողմից վերլուծությունն իրականացվել է առանց հաշվի առնելու, որ տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկանները ներառված են գնումների միասնական անվանացանկի հետևյալ խմբերում համապատասխանաբար («33100000-բժշկական սարքեր» և «39700000» կենցաղային տեխնիկա), իսկ նմանատիպ (համանման) սահմանվել է լաբորատոր կահույքի և/կամ օդաքարշ համակարգի մատակարարումը, առանց հաշվի առնելու Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջը, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության

կողմից որպես նմանատիպ ներկայացված ապրանքների տնտեսական գործունեության չհամապատասխանելն Ընթացակարգի հրավերով սահմանված տնտեսական գործունեության խմբերին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանի կողմից 25.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**